«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ՝ ՕՐԵՆՔՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»՝, ՝«ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»՝ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝», ՝«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»՝ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»՝, «ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

՝ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ՝ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» 2001 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-169 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասում «բնագավառում» բառից առաջ, ինչպես նաև Օրենքի 4-րդ գլխի վերնագրում «պետական գրանցման և պետական հաշվառման» բառերից հետո լրացնել «,ինչպես նաև իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերի ներկայացման կամտեղեկությունների բացահայտման կանոնները խախտելու» բառերով:

Հոդված 2.Օրենքի 4-րդ գլուխը լրացնել նոր 20.1-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 20.1.Իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների բացահայտման կանոնները խախտելու հետ կապված վարչական վարույթի առանձնահատկությունները**

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

2.Իրական շահառուների հայտարարագրման՝ սույն օրենքով նախատեսված պահանջների խախտման հետ կապված վարչական վարույթի վերաբերյալ գործերը վարվում են էլեկտրոնային եղանակով՝ վարչական իրավախախտումների հաշվառման շտեմարանների միջոցով:

3. Վարչական վարույթի վերաբերյալ էլեկտրոնային գործերը շտեմարանի ընթացիկ հատվածում պահպանվում են մինչև դրանց ավարտը, իսկ ավարտից հետո՝ տեղափոխվում շտեմարանի արխիվ:
4. Սույն օրենքով սահմանված՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից օրենքում սահմանված ժամկետում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելու վերաբերյալ վարչական վարույթը բաղկացած է խախտման հատկանիշների պարզման և վարչական ակտի ընդունման փուլերից:
5. 5. Իրավախախտման հատկանիշների պարզումը վարույթ իրականացնող վարչական մարմնի կողմից իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու՝ սույն օրենքով նախատեսված պահանջներին համապատասխանությունը ստուգելու գործընթացն է:
6. Սույն օրենքով սահմանված՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացվելու կամ հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու կամ իրական շահառուների բացահայտման նպատակով պատշաճ ուսումնասիրություն չիրականացնելու կամ իրականացված պատշաճ ուսումնասիրության ընթացքում ձեռքբերված տեղեկությունները և փաստաթղթերն օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չպահպանելու վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական վարույթի առավելագույն ժամկետը 40 օր է:

7. Սույն հոդվածի 4-րդ և 6-րդ մասերով նախատեսված վարչական վարույթի ժամկետը սկսվում է դիմումը տվյալ վարչական մարմնում մուտքագրելու օրվանից, իսկ վարչական մարմնի նախաձեռնությամբ ընդունվելիք վարչական ակտերի համար՝ նախաձեռնության օրվանից:
8. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն չի կազմվում:
9. Վարչական ակտը, ի թիվս օրենքով պահանջվող տեղեկությունների, ներառում է նաև՝

1) նշանակված վարչական պատասխանատվության միջոցը (տուգանքի դեպքում՝ դրա չափը),

2) կենտրոնական գանձապետարանի հաշվեհամարը՝ նշանակված տուգանքը վճարելու համար.

10. Վարչական ակտի ձևը և նմուշը սահմանվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանով:»:

Հոդված 3. Օրենքի 27-րդ հոդվածում՝

- 1-ին մասում լրացնել նոր 5-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) անհատ ձեռնարկատիրոջ Հայաստանի Հանրապետությունում հաշվառման հասցեի բացակայության դեպքում՝ համապատասխան հասցեի գրառման իրավաչափությունը հաստատող փաստաթուղթ կամ բնակության կամ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու վայրի հասցե տրամադրելու վերաբերյալ սեփականատիրոջ (ընդհանուր սեփականության դեպքում՝ բոլոր սեփականատերերի) համաձայնություն, որը հաստատվում է նոտարի կողմից կամ «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» օրենքով սահմանված բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից տրված տեղեկանքով:»,

- լրացնել նոր 1.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1.Եթե որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման համար դիմում է օտարերկրյա ֆիզիկական անձը, ապա պետական հաշվառման համար, սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված
փաստաթղթերից բացի, ներկայացվում է նաև տվյալ անձի անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճենը՝ վավերացված և հայերեն թարգմանված:»:

Հոդված 4.Օրենքի34-րդ հոդվածի՝

- 1-ին մասում լրացնել նոր 8-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«8) իրավաբանական անձի գտնվելու վայրի հասցեն հիմնադիրների կամ

գործադիր մարմնի ղեկավարի հաշվառման վայրի հասցեից տարբերվելու կամ հաշվառման վայրի բացակայության դեպքում՝ համապատասխան հասցեի գրառման իրավաչափությունը հավաստող փաստաթուղթ կամ իրավաբանական անձի գտնվելու վայրի սեփականատիրոջ (ընդհանուր սեփականության դեպքում՝ բոլոր սեփականատերերի) համաձայնությունը, որը հաստատվում է նոտարի կողմից կամ «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» օրենքով սահմանված բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից տրված տեղեկանքով:»:

- 3-րդ մասում «ներկայացնում է» բառերը փոխարինել «անհրաժեշտ է ներկայացնել» բառերով, իսկ «նաև» բառից հետո լրացնել «հիմնադիր իրավաբանական անձի կառավարման լիազորված մարմնի որոշումը,» բառերը,
- 4-րդ մասում «ներկայացնում է» բառը փոխարինել «անհրաժեշտ է ներկայացնել» բառերով:

Հոդված 5.Օրենքի 39-րդ հոդվածում՝

- լրացնել նոր 3.2-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.2. Եթե փոփոխությունների պետական գրանցման ընթացքում փոփոխվում է նաև իրավաբանական անձի գտնվելու վայրը, ապա ներկայացվում է համապատասխան հասցեի գրառման իրավաչափությունը հաստատող փաստաթուղթ կամ իրավաբանական անձին գտնվելու վայր տրամադրելու մասին սեփականատիրոջ (ընդհանուր սեփականության դեպքում՝ բոլոր սեփականատերերի) համաձայնությունը, որը հաստատվում է նոտարի կողմից կամ «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» օրենքով սահմանված բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից տրված տեղեկանքով:»:

- 5-րդ մասի 1-ին նախադասությունը լրացնել հետևյալ բառերով.

«, ինչպես նաև համապատասխան հասցեի գրառման իրավաչափությունը հաստատող փաստաթուղթ կամ իրավաբանական անձին գտնվելու վայր տրամադրելու մասին սեփականատիրոջ (ընդհանուր սեփականության դեպքում՝ բոլոր սեփականատերերի) համաձայնությունը, որը հաստատվում է նոտարի կողմից կամ «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» օրենքով սահմանված բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից տրված տեղեկանքով:»:

Հոդված 6.Օրենքի 43-րդ հոդվածի՝

- 1-ին մասում 3-րդ կետը խմբագրել՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) առկա է իրավաբանական անձի փոփոխությունների գրանցումն արգելող կամ սահմանափակող՝ դատական ակտ, հարկադիր կատարումն ապահովող

մարմինների, նախաքննություն իրականացնող մարմինների, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում այլ պետական մարմինների Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կայացված որոշումներ։»։

- 1-ին մասում լրացնել նոր 4-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4) սույն օրենքով նախատեսված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ներկայացման կամ սույն օրենքի 60.3-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պարտականությունների կատարված չլինելը։ Մերժման սույն կետով նախատեսված հիմքը չի տարածվում իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի և (կամ) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցի անձնագրային տվյալների փոփոխությամբ պայմանավորված պետական գրանցումների դիմումների վրա։»։

Հոդված 7. Օրենքի 44-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետում լրացնել նոր՝ «թ» ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«թ. սույն օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ կետով նախատեսված փաստաթուղթը։»։

- 2-րդ մասի 2-րդ կետում լրացնել նոր՝ «ը» ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ը. գտնվելու վայրի հասցեի փոփոխության դեպքում ներկայացվում է նաև սույն օրենքի 39-րդ հոդվածի 3.2 մասով նախատեսված փաստաթուղթը։»։

3) 3-րդ մասի 2-րդ կետում լրացնել նոր՝ «ը» ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ը. սույն օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ կետով նախատեսված փաստաթուղթը։»։

4) 4-րդ մասի 1-ին կետում լրացնել նոր «զ» ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ը. գտնվելու վայրի հասցեի փոփոխության դեպքում ներկայացվում է նաև սույն օրենքի 39-րդ հոդվածի 3.2 մասով նախատեսված փաստաթուղթը։»։

5) 4-րդ մասի 2-րդ կետում լրացնել նոր՝ «ը» ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ը. սույն օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ կետով նախատեսված փաստաթուղթը։»։

6) 5-րդ մասի 2-րդ կետում լրացնել նոր՝ «ը» ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ը. սույն օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ կետով նախատեսված փաստաթուղթը։»։

7) Հոդվածում լրացնել նոր 10-րդ մաս՝ հյետևյալ բովանդակությամբ.

«10. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «թ», 3-րդ մասի 2-րդ կետի «ը», 4-րդ մասի 2-րդ կետի «ը» և 5-րդ մասի 2-րդ կետի «ը» ենթակետերով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվում, եթե վերակազմակերպման արդյունքում ստեղծվող իրավաբանական անձի գտնվելու վայրի հասցեն համընկնում է վերակազմակերպվող իրավաբանական անձի գտնվելու վայրի հասցեի հետ։»։

Հոդված 8.Օրենքի 46-րդ հոդվածի՝

- 1-ին մասում լրացնել նոր4-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4) սույն օրենքով նախատեսված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ներկայացման կամ սույն օրենքի 60.3-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պարտականությունների կատարված չլինելը»։

Հոդված 9. Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր 3-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) սույն օրենքով նախատեսված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ներկայացման կամ սույն օրենքի 60.3-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պարտականությունների կատարված չլինելը։»։

Հոդված 10. Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասում «26-րդ հոդվածի 7-րդ մասում» բառերը փոխարինել «25.2-րդ հոդվածի 1-ին մասում» բառերով։

Հոդված 11.Օրենքի 60-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասում «սույն» բառից հետո լրացնել «օրենքի 58-րդ» բառերը.

2) 5-րդ մասում «անձի» բառից հետո լրացնել «առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի պետական» բառերը։

Հոդված 12. Օրենքի 60.1-րդ հոդվածում՝

- 3-րդ մասում «չեն տարածվում» բառերից հետո լրացնել «պետական կամ համայնքային մասնակցությամբ ընկերությունների, որոնց բաժնետոմսերի կամ բաժնեմասերի 100 տոկոսն ուղղակիորեն պատկանում է պետությանը կամ համայնքին, Հայաստանի

Հանրապետության կամ համայնքի կողմից հիմնադրված հիմնադրամների, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև» բառերը:

- Լրացնել նոր 4-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.Սույն գլխի դրույթները չեն տարածվում այն իրավաբանական անձանց վրա, որոնք հայտարարագիր ներկայացնելու՝ սույն օրենքով սահմանված ժամկետի ավարտի օրվան նախորդող առնվազն երեք տարիների ընթացքում հանդիսանում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի իմաստով գործունեությունը որոշակի կամ անորոշ ժամկետով դադարեցրած իրավաբանական անձ: Սույն մասով սահմանված իրավաբանական անձանց վերաբերյալ տեղեկությունների ինքնաշխատ եղանակով ստացման կարգը և ժամկետները սահմանվում են Կառավարության որոշմամբ:»

Հոդված 13. Օրենքի 60.4-րդ հոդվածում լրացնել նոր 5-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«5. Իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների պետական գրանցումն իրականացվում է ինքնաշխատ եղանակով՝ էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հիման վրա՝ այն էլեկտրոնային եղանակով մուտքագրելուց հետո՝ 2-րդ աշխատանքային օրը:»:

Հոդված 14. Օրենքի 60.5-րդ հոդվածի՝

- 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.Գործակալությունն իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների արժանահավատության ապահովման նպատակով՝ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերով հարուցված վարչական վարույթների քննության միջոցով իրականացնում է ընթացիկ վերահսկողություն»: ,

2) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Գործակալությունն իր նախաձեռնությամբ սույն օրենքով սահմանված կարգով հարուցում է վարույթ այն իրավաբանական անձանց նկատմամբ, որոնք օրենքով սահմանված ժամկետում չեն ներկայացրել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր: Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը սույն օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացնելու պարտականության կատարումը ստուգելու նպատակով Գործակալությունը՝ սույն հոդվածի 3.1-ին մասով սահմանված կարգով կամ դիմումի հիման վրա կարող է հարուցել վարույթ, իսկ խախտում հայտնաբերելու դեպքում՝ կիրառել օրենքով սահմանված վարչական պատասխանատվության միջոցներ»:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-ին մաս.

«3.1. Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը սույն օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացնելու պարտականության կատարումը ստուգելու նպատակով Գործակալությունը յուրաքանչյուր տարի՝ հաշվի առնելով իրավաբանական անձանց գործունեության ռիսկայնության չափանիշները, կարող է հարուցել վարչական վարույթներ։ Իրավաբանական անձանց գործունեության ռիսկայնության չափանիշների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը, դրանց հաշվարկման և գնահատման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։»:

Հոդված 15.Օրենքի 61-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում առկա տեղեկությունները թղթային կրիչով, այդ թվում՝ նշված տեղեկությունների բացակայության վերաբերյալ տեղեկությունները կամ իրավաբանական անձանց կանոնադրությունների պատճենները թղթային կրիչով, ինչպես նաև տեղեկատվական համակարգի միջոցով գործակալության պաշտոնական կայքից Գործակալության կողմից գրանցվող/հաշվառվող սուբյեկտների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ պարունակող միասնական ձևի քաղվածքները տրամադրվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարումը կատարելուց հետո, իսկ սույն օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում՝ առանց վճար վճարելու։»,

- 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. Գործակալության կողմից գրանցվող/հաշվառվող սուբյեկտների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ պարունակող միասնական ձևի քաղվածքները տեղեկատվական համակարգի միջոցով գործակալության պաշտոնական կայքից տրամադրվում է դիմումը ստանալուց հետո՝ անմիջապես, իսկ իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում առկա տեղեկությունները թղթային կրիչով տրամադրվում են դիմումը ստանալու օրվանից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում։»:

Հոդված 16. Եզրափակիչ և անցումային դրույթներ.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի և 14-րդ հոդվածի 3-րդ կետի, որոնք ուժի մեջ են մտնում հրապարակման օրվանից՝ վեց ամիս հետո։
2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական

ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 37-րդ հոդվածի 7-րդ մասում «169.28-րդ» բառերից հետո լրացնել «, 169.29-րդ» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» 2001 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-252 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 33-րդ հոդվածի

- 1-ին մասի 4-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ

հետևյալ բովանդակությամբ.

«Ընկերության կանոնադրության մեջ սույն կետով նախատեսված փոփոխությունները կատարելու վերաբերյալ փաստաթղթերը, կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումը, ինչպես նաև լրացուցիչ ավանդների ներդրումը հաստատող փաստաթղթերը (ներդրման պայմանագիրը և (կամ) գույքի հանձնման-ընդունման ակտը և (կամ) ընկերության անունով տրված ներդրվող գույքի սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը և (կամ) դրամական վճարումը հավաստող փաստաթուղթը և այլն) պետք է լրացուցիչ ավանդների ներդրման արդյունքների հաստատման և ընկերության կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, ներկայացվեն իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմին:»:

2) 2-րդ մասի 2-րդ պարբերության 1-ին նախադասության մեջ «ընդունման հետ միաժամանակ, որն ընդունվել է ընկերության մասնակցի՝ լրացուցիչ ավանդ ներդնելու դիմումի հիման վրա,» բառերը փոխարինել «ընդունումից և ներդրումը կատարելուց հետո» բառերով,

3) 2-րդ մասի 2-րդ պարբերության 1-ին նախադասության մեջ «պետք է որոշում ընդունվի» բառերից հետո լրացնել «լրացուցիչ ավանդների ներդրման արդյունքների և» բառերով:

4) 2-րդ մասում լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ մասնակցի դիմումի պատճենը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ներդրումը հավաստող փաստաթղթերը ներկայացվում են իրավաբանական անձի պետական գրանցում իրականացնող մարմին:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.«Բաժնետիրական ընկերությունների մասին» 2001 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին նախադասությունում «պարտատերերին» բառից հետո լրացնել «, ինչպես նաև այդ մասին տեղեկություններ է հրապարակում http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերը:

Հոդված 2. Օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասում «այն» բառից հետո լրացնել «http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.«Սնանկության մասին» 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-51-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 62-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունում «իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում» բառերը փոխարինել «http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդողտասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բանկերի և բանկային գործունեության մասին» 1996 թվականի

հունիսի 30-ի ՀՕ-68 օրենքի ամբողջ տեքստում (այսուհետ՝ Օրենք), բացառությամբ 75-րդ հոդվածի,«մամուլ» բառը և դրա բոլոր հոլովաձևերը համապատասխանաբար փոխարինել «http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայք» բառերով կամ դրանց հոլովաձևերով:

Հոդված 2. Օրենքի 75-րդ հոդվածի 3-րդ մասում «առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում» բառերը փոխարինել «http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով.

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածի 32-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«32.Մեկ սուբյեկտի վերաբերյալ իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում առկա տեղեկությունները թղթային կրիչով՝ այդ թվում նշված տեղեկությունների բացակայության վերաբերյալ տեղեկությունները կամ իրավաբանական անձանց կանոնադրությունների պատճենները թղթային կրիչով, ինչպես նաև տեղեկատվական համակարգի միջոցով մեկ սուբյեկտի վերաբերյալ Գործակալության պաշտոնական կայքից Գործակալության կողմից գրանցվող/հաշվառվող սուբյեկտների վերաբերյալ ամբողջական

բազային տուրքի եռապատիկի չափ

տեղեկություններ պարունակող միասնական ձևի
քաղվածքների պատճենների տրամադրման
համար

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: